Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարարի պաշտոնակատար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2018 թվականի նոյեմբերի 19-21-ը, Ռուսաստանի Դաշնություն, Սարատով

4. Հրավիրող կողմը.

ՌԴ Սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայություն (Ռոսպոտրեբնադզոր)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Երկկողմ բանակցություններ ՌԴ Սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայության (Ռոսպոտրեբնադզոր) ղեկավար տիկին Ա. Պոպովայի հետ և Համագործակցության հուշագրի ստորագրում:

Մասնակցություն «Սանիտարահամաճարակային բարեկեցության ապահովումը ԱՊՀ անդամ-պետություններում, այդ թվում՝ ժանտախտի անդրսահմանային բնական օջախների տարածքում» խորագրով XIV Միջազգային գիտա-գործնական համաժողովին, որը նվիրված էր Ռոսպոտրեբնադզորի «Միկրոբ» գիտահետազոտական ինստիտուտի 100 ամյակին:

Համաժողովի նպատակն էր ամրապնդել համաճարակային վերահսկողության և սանիտարահամաճարակային բնույթի արտակարգ իրավիճակների ժամանակ արագ արձագանքման հարցերում երկրների համագործակցության մեխանիզմները: Այն կնպաստի վարակիչ հիվանդությունների բռնկումների բացահայտման, արձագանքման և կանխարգելման համար երկրների կարողությունների բարձրացման շուրջ կարծիքների փոխանակմանը, առաջարկների մշակմանը և փորձի փոխանակմանը:

6. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու Ռոսպոտրեբնադզորի համապատասխան կազմակերպությունների և առաջատար գիտական հաստատությունների փորձագետներ, ինչպես նաև ԱՀԿ ներկայացուցիչներ, Եվրոպայի, Կենտրոնական ու Հարավ-Արևելյան Ասիայի և Աֆրիկայի նախարարներ, համապատասխան մասնագիտական հաստատությունների ներկայացուցիչներ:

Համաժողովի ընթացքում քննարկվեցին Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի, Հարավ-արևելյան Ասիայի և Աֆրիկայի տարածաշրջանների երկրների հետ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի համագործակցության ծրագրերի իրականացման արդյունքները և ապագա հեռանկարները: Հատուկ ուշադրություն դարձվեց հատկապես վտանգավոր, բնական-օջախային վարակիչ հիվանդությունների վարակաբանական հսկողության և օպերատիվ արձագանքման կատարելագործման հարցերին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում Ռոսպոտրեբնադզորի հետ համագործակցության, հիգիենիկ-հակահամաճարակային նորմերի կիրառման ուղղությամբ երկկողմ համագործակցության, հիգիենիկ հակահամաճարակային փոխգործակցության ոլորտներում իրականացված համատեղ աշխատանքների և առաջիկա պլանների վերաբերյալ ելույթով հանդես եկավ Առողջապահության նախարարի պաշտոնակատար Արսեն Թորոսյանը:

Միջոցառման ընթացքում Առողջապահության նախարարի պաշտոնակատար Արսեն Թորոսյանը հանդիպում ունեցավ ՌԴ Սպառողների

իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայության ղեկավար Աննա Պոպովայի հետ:

Վերջինիս հետ քննարկվեցին հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները, ձեռք բերվեցին կոնկրետ պայմանավորվածություններ համագործակցության շուրջ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ընթացքում ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Ռուսաստանի Դաշնության Սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայության միջև Միջազգային բժշկասանիտարական կանոնների ներդրման ոլորտում համագործակցության մասին» Համաձայնագիր:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Պայմանավորվող կողմերը ջանքեր են ներդնելու ստանձնած պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ: Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ամրապնդել համագործակցող կողմերի միջև առկա փոխշահավետ կապը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

23.11.2018

X

VERIFIED OCSP 23.11.2018 18:04:25 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

2018թ. նոյեմբերի 23